

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌ

Ծ. ԼԱԼԱՅԵՍԱՆԻ

ՆՁԱՆՆԵՐԻ ՎԱՆՔԵՐ *

ՎԱՆԵՎԱՆՈՒ ՎԱՆՔ

Տեղագրութիւն.—Վանէվանու վանքը տեղաւորուած է Ներքին Արուշաու գիւղի ($63^{\circ}10'20''$ — $40^{\circ}0'$) արեւելահայաստանի կողմը, մի գեղեցիկ հովտում, որի միջով հոսում է մի առուակ, որտեղ եւրոպական ուղեւորները Զորի արեւելեան լանջը պատած է ժայռերով, որոնց մէջ կան արհեստական քարայրեր։ Սրանցից մինը շատ ընդարձակ է, և մի բացուածք ունի դէպի վեր. նկատելի է, որ սա յարգանոց է եղել և սրա վերև կալ են կախել ու յարգը բացուածքից լցրել սրա մէջ։ Մի քարայրի դռան մօտ մի խաչ է քանդակուած և կողքին փորագրուած. Ած ողոր Ածստուրոյ, որ Այ ողորմութեամբ այս խաչս գործեալ է։

Այս փոքրիկ ձորակը պատկանում է վանքին, որի արդիւնքով ապրում է մի ծերունի վանահայր։ Համբարձման տօնին շրջակայ գիւղերից ուխտ են գալիս այստեղ։

Նոր-Բայազէտից դէպի Վայոց ձոր ձգուող փոստային ճանապարհից մի ուղի Արուշաու գիւղի միջով ուխտաւորին բերում է այս վանքը, ուր ապաստանելու համար կան երկու հասարակ սենեակ։

Վանքի նկարագրութիւնը.—Վանէվանու վանքը բաղկացած է մի եկեղեցուց՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով, մի դաւթից և չորս փոքրիկ մատուռներից։ Շինուած է սրբատաշ քարերից։ Եկեղեցին խաչաձև է, անսիւն և ունի միայն երկու աւանդատուն. երկարութիւնն է $8\frac{1}{2}$, լայնութիւնը 7 և բարձրութիւնը 15 մետր,

*) Տես «Աղագրական Հանդէս» XXIII դիրք.

պայտաձև կամարների վրայ բոլորում է գլանաձև գմբէթը՝ կոնս-
ձև կաթուղիկէով: Փոքրիկ, նեղ պատուհաններից չորսը բացւում
են գմբէթի վրայ, և երեքը եկեղեցու պատերի մէջ, ազօտ լոյս
սփռելով:

Դաւթիքը գտնւում է եկեղեցու հարաւային կողմը, Թաղակապ
է, և կիսաւեր. սրա արեւելեան պատին կից կայ մի մեծ խաչքար,
որի վրայ արձանագրուած է

Թվ. ԶԾԱ. (=1502).

Կանգնեցաւ սբ խաչս յիշատակ Մելիքսէթէք եպիսկո-
պոսին, որդի Միրզին Գեղարքունւոյ իշխանին:

Դաւթի յատակում կան բաւականաչափ գերեզմաններ առանց
տապանազրի:

Դաւթի հարաւային կողմում մի դուռ բացւում է փոքրիկ
մատրան մէջ, որ 5 մետր երկարութիւն և 2,5 մետր լայնութիւն ունի,
չորս որմնասիւներով ու ուղիղանկյան կամարներով: Ձեղունը ամ-
բողջովին խոնարհուած է: Ոորաններ չկան, միայն հարաւային
կողմում մի ներսանկուած կայ, որ հաւանօրէն իւր խորան է ծա-
ռայել:

Դաւթի արեւելեան կողմում էլ մի դուռ է բացւում երեք
միմեանց կից, փոքրիկ մատուռների մէջ:

Պատմական տեսութիւն.—Վանէվանու Ս. Գրիգոր Լուսա-
ւորչի վանքը, ինչպէս երևում է կաթուղիկէի վրայ եղած արձա-
նագրութիւնից, շինել է Շապուհ Բագրատունի Հայոց սպարապե-
տը, Աշոտ Թագաւորի որդին, Քսի 903 թուին, իւր եղբայր Սըմ-
բատի Թագաւորութեան միջոցին և ապահովելով չորս գիւղի տուր-
քերով վանահայր է կարգել հայր Աբրահամին: Տէր Սողոմոնը,
Տէր Աթանասը և Սմբատ Թագաւորը ջուր են բերել այստեղ Ոն-
ճոռից մի ոմն Դաւթի ձեռքով:

Միւս սակաւաթիւ արձանագրութիւններից էլ երևում է որ
1320 թուին մի ոմն Հենուպ, իսկ 1329-ին Սարգիս իրենց ամու-
սիւնների հետ միաբանել են այս վանքին, արդիւնք տուել, ուստի
և միաբանութիւնը սահմանել է նրանց համար պատարագ մա-
տուցանել:

Այս հազարամեայ վանքի մասին ուրիշ ոչ մի տեղեկութիւն
յայտնի չէ:

Արձանագրութիւններ

Վանէվանու ս. Լուսաւորիչ եկեղեցու գմբէթի վրայ.

Յանուն Այ ես Շապուհ Բագրատունի Հայոց սպարա-
պետ տէրանց տէր, որդի Աշոտոյ Հայոց Թագաւորի ՚ի Ժա-

մանակս Հայոց Թագաւորի մեծին Սմբատայ հարազատ եղբար իմոյ վերագիրտողի Հայոց հայրապետի Տն Յոհաննիսի իմացայ և ծանեայ թէ ամ փառք եւ մեծութիւնս պառեւոց են վաղիւն և կորնչելոց, մեծափափազ տենչանովք վերակացու եւ տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին յիմում իշխանութեան Վանաւանի վանս տուն Այ կանգնել վիմատաշս կոփածովք շատածախ գանձիւք եւ մեծաջան վաստակովք կատարել. Թերեա լիցին ինձ ողորմութիւն յայնմ աւուր յորժամ բանք պառնին եւ զործք Թագաւորենու Եւ տուաք ի քեզ Վանաւանու վանական հայր Աբրահամ աղաւթել եւ վայելել եւ որ այլք յետքոյ յաջորդեն եւ պաշտաւնայք խորանիդ յորժամ ժողովիք միաբան յաղաւթս. եւ կերակրիք յանմահական կերակրոյն յիշեալիք զիս եւ զիման, զի արասցէ ողորմութիւն ողորմածն Ած:

Եւ ետու Դ. դեղոյս սահման Կոթայ քարն, Շաւառնահողն, Գէտամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, ՄԿ դրամ ի Կոթայ քարէն, ՇԼ ի Բոտելեաց ՈԿ յԱղիբողանաց, ԶԴ ի Կարբին գետերէն եւ նաւերէն. Տր Սողոմոն Տր Աթանաս, Սմբատ Թագ. աստ Ածով բերեալ շուրս յՈնճոռաց Դաւթի ձեռք... զոր յառաջ բերած էր Ած ողորմի. թվ Հայոց ՅԾԲ (=903).

Լուսաւորիչ եկեղեցու աջակողմեան խորանի վերն.

Կամաւն ամենակալին Այ ես Հեճուպս եւ ամուսին իմ Անիփինուայ միաբանեցաք ս. Լուսաւորչիս. արարաք արդիւնս. միաբանք սահմանեցին ի տարին Բ. պատարագ Խ. ից տաւնին. Ա ինձ Հեճուպիս, Ա. Անիփինու. Կատարիչք աւրհնին Այ. խափանիչք դատին ի Տոնէ. Թվ. ԶԿԹ (=1320).

Սրա ներքեւ.

Կամաւն Այ ես Դաւիթ միաբանեցայ սուրբ ուխտիս. միաբանքն խոստացան Ա. պատարագ ծառազարդին ինձ Դաւթիս.

Լուսաւորիչ եկեղեցու ձախակողմեան խորանի վրայ.

Շնորհիւն Այ ես Սարգիս եւ ամուսին իմ Ամէկն միաբանեցաք սր Լուսաւորչիս արարաք արդիւնս. միաբանք

սահմանեցին ի տարին Բ. պտրզ Ա. ի տաւնին սրբոյն Սարգսի. Ա. ծառգարդարի. Ա. ինձ Ա. ամուսնոյն իմոյ. կատարիչք աւրհնին Այ. Թվ. 24Ը (=1329).

ՄԱՔԻՆԵԱՅ ՎԱՆՔ

Տեղադրութիւն.—Մաքինեաց վանքը գտնուում է Ղըզըլ-վանք Բրքարնակ գիւղում (63°16'50"—40°7'37") ձորակի լանջին. առջևից հոսում է համանուն գետակը, բարձրից մի արխ: Այս բարձրութիւնից բացւում է մի սքանչելի տեսարան: Վանքը պարբայապատ է, թէպէտ շատ տեղեր այժմ քանդուած: Ունի ընդարձակ բակ, ուր կան նաև խցեր, մի մեծ սեղանատուն, և մի քանի սենեակներ: Վանքն այժմ կիսաւեր է և բոլորովին անխնամ ձգուած: Մի թուրք ընտանիք բնակւում է վանքի սենեակների մէջ, բանջարանոց է դարձրել վանքի գաւիթը և շտեմարան՝ մատուռ: Նոր-Բայազէտից դէպի Վայոց-ձոր ձգուող ճանապարհից մի կածան Գեօղակ-Բուլաղի մօտից բարձրանում է մինչև այս վանքը:

Պատմական տեսութիւն.—Գեղարքունիքի վանքերի մէջ այս հնագոյն վանքը կոչուել է Մարքնոց կամ Մարքնեաց կամ Մարքնոցաց և կամ Մարքստնից, և այս հասի սակա մաքենի կամ օղենի նիւթոյ զգեստուց միանձանցն՝) սակայն շատ աւելի հաւանական է, որ այս անունը յառաջացած լինի այն հանգամանքից, որ այստեղ նաև հնումը, ինչպէս և այժմ, մեծ քանակութեամբ մաքենի են պահուել, որովհետև լերան լանջը և հով կլիման շատ նպաստաւոր են խաշնարածութեան:

Վանքի գլխաւոր եկեղեցին կոչւում է Ս. Աստուածածին Գեղամայ: Մաքինեաց վանքի սկզբնաւորութեան մասին Ստեփանոս Օրբելեանը պատմում է թէ Թ. դարի կիսին Սիւնեաց Գրիգոր Սուփան Բ. իշխանը Կոթաց եկեղեցին շինելուց յետոյ՝ Վերինէ և (զայս) գերկնանճեմ խմբարան՝ ի հրաշագան մենարանին ի փառաբնակ ուխտն Մաքնոցաց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին, և պարսպէ վիմօք. և այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անխնայ գանձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք, նաև գեղօք և ագարակօք և այգեստանօք՝ ի Գառնի և յերևան և յայլ տեղիս. և կարգէ ի նմա արձան յիշատակի հարստայոյս արգեանցն իւրոց, ըստ այսմ օրինակի, սակայն Օրբելեանը առաջ բերելով մի երկար արձանագրութիւն աւելացնում է. «Ահա այս իսկ էր արձան Մաքնոցաց, բայց վասն

1) Ալիշան, Սիսական, եր. 66.

հնութեանն և խախտելոյ քարանցն՝ ոչ կարացաք զբովանդակն իմանալ. այլ բազում բանք և տուրք իշխանացն պակասին. զայս փոքր ի շատէ եղաք, զի մի բնաւ ջնջեալ կորեցէ յիշատակնոցաւ — Այժմ այս արձանագրութեան հետքն անգամ չկայ, միայն ս. Աստուածածնի եկեղեցու հարաւային պատի վրայ՝ Ժէ դարում վերանորոգողը՝ երեւի նոյն Օրբելեանի պատմութիւնից առնելով՝ արձանագրել է.

«Կամաւն Աստուծոյ, որ Սիւնեաց Սուլիան իշխան շինեաց Մաքենուց եկեղեցիս ի Գժ թվին, ես առաջնորդ սուրբ ուխտին ջուղայեցի նաչատուր վարդապետս . . . վերստին նորոգեցի և պայծառացուցի»:

Վանքի նկարագրութիւնը.— Մաքենեաց վանքը բաղկացած է մի մեծ եկեղեցուց, մի դաւթից և մի մատուռից, որոնք գտնուում են պարսպի մէջ, իսկ սրանից դուրս, փոքր ինչ հեռու կան նաև երկու փոքրիկ սաղաշէն եկեղեցի: Այս բոլոր շինութիւններն էլ շինուած են առաւելապէս կարմրաւոյն քարով, որից և յառաջացել է թրքական Ղըզըլ-վանք (կարմիր-վանք) անունը, որ այժմ կրում է թէ վանքը և թէ սրան շրջապատող թրքաբնակ դիւղը:

Գլխաւոր եկեղեցին, որ կոչուել է ս. Աստուածածին Գեղամայ, շինուած է սրբատաշ քարից, խաչաձև է, չորս խորաններով, անսիւն, բոմանական կամարներով և ութանկիւնի գմբէթով, կոնաձև կաթողիկէով պսակուած: Արտաքուստ զուրկ է քանդակներից, պատերի մէջ ունի երկական ներսանկուածներ: Պատուհանները փոքր են և նեղ:

Հարաւային կողմում կայ մի դուռն, որի երկու կողմում, ներքուստ, կան մի ձիու և մի իշի բըլիէֆ քանդակ:

Եկեղեցու երկարութիւնն է 28 մետր, լայնութիւնը 24 մետր, և բարձրութիւնը մօտ 15 մետր:

Եկեղեցու մէջ, հիւսիսային կողմում կայ մի աւազան, որ յետոյ է շինուած: Գաւիթը, որ գտնուում է եկեղեցու հարաւային կողմը, շինուած է հասարակ, անտաշ քարից և ճարտարապետական տեսակէտից մի առանձին նշանակութիւն չունի: Սրա արեւելեան կողմը բարձրանում է սաղաշէն, անսիւն մատուռը, որ այժմ կիսաւեր է: Սրա պատի վրայ կայ արեւի ժամացոյց:

Պարսպից դուրս գտնուած երկու փոքրիկ եկեղեցիները արդէն կիսաւեր են, և ճարտարապետական տեսակէտից առանձին նշանակութիւն չունին:

Արժանագրութիւններ

Մաքինեաց վանքի հարաւային պատի վրայ.

Կամաւն Այ Սիւնեաց Սուփան իշխան շինեաց Մաքինեաց եկեղեցին ի ԳՃ (=851):

ՌՃԺԵ (=1666) Թվին. Եւ առաջնորդ սբ ուխտիս շուղայեցի Քաչատուր վարդապետս, որդի գոլով Յակոբայ՝ վերստին նորոգեցի եւ պայծառացուցի ի ժամանակս սրբազան հայրապետին Յակոբայ եւ միաբանք սբ վանուցս զտէր Պարսամբ, զտէր Գրիգորն եւ զսարկաւազունս Գրիգորն, Ղազարն եւ Ստեփաննոսն, տնտես Սարուխանն. յիշեցէք ի Քս Ած եւ որք յիշատակեն զմեզ յիշատակն նոցա խաղաղութեամբ մնասցէ. ամէն:

Վանքի դրան առջև եղած մի տապանաքարի վրայ.

Եւ Աւետիս վրդպտս առաջնորդ սբ Ածժածիս հանգուցի տապանս հօրն իմ պարոն Նիսիւն որդի Իսայպէկին, Թոռն պարոն Մէլիք Շահինազարին. Թ. ՌՃՖԲ (=1693).

Մի գերեզմանաքարի վրայ.

Այս է հանգիստ եղին, որդի Պապախանին որ ի անաւրինաց սպանեցաւ. Թ. ՌՃԺԸ (=1669):

ՇՈՂԱԳԱՅ ՎԱՆՔ

Այս վանքը գտնուում է այժմ Վալի Աղալու կամ Ձորագեղ կոչուած գիւղում ($62^{\circ}49'55''$ — $40^{\circ}10'29''$), մի լեզուաձև բլրակի վրայ: Հնումը կոչուել է Շողագայ կամ Շողուագայ, յայդազս ծագման իբիք լուսոյ աստուածայնոյ, ըստ Ասողիկ պատմչի¹⁾, իսկ աւելի ուշ՝ Շողավանք:

Վանքը կառուցել է Սիւնեաց իշխան Դաբուռն Վասակի կին եւ Բագրատունի Աշոտ Ա. Թագաւորի դուստր՝ Մարիամ տիկինը, Սեանայ վանքի հիմնադրուհին, 877—886 թուականներին եւ ինքն էլ Թաղուել է սրա մօտ²⁾:

Պատմական տեղեկութիւններ պակասում են, յայտնի է միայն, որ 1606 թուին այստեղի առաջնորդ է եղել Դաւիթ եպիսկոպոսը, որ ոտանաւոր գրուածքով ողբացել է Շահաբասի հրամա-

1) Ս. Ասողիկ գլ. ԼԲ.

2) Ալիան. Սիսական:

նով կատարուած գերեզմարութիւնը և այդ ժամանակ տեղի ունեցած սոսկալի սովը ¹⁾:

Նաև 1670 թուին այս վանքի առաջնորդ եղել է Մկրտիչ եպիսկոպոսը, որի արտագրած աւետարանը այժմ գտնուում է Սեւանայ վանքում:

Շողազայեկեղեցին կոչուել է ս. Պետրոս առաքելալի անունով: Շինուած է կարմրաւոյն, սրբատաշ քարից, խաչած և և ունեցել է չորս խորան. այժմ կանգուն է միայն հիւսիսային պատը, որ արտաքուստ ունի երկու ներսանկուած և մէջ տեղում մի երկար պատուհան: Արևելեան պատը, որ կանգուն էր մինչև 1910 թուականը, գիւղացիները դիտմամբ քանդել են՝ քարերը իրենց նոր եկեղեցու վրայ գործադրելու, որով անհետացրել են եկեղեցու շուրջը պատող երկար արձանագրութեան և այս մասի մնացորդները:

Այս կարևոր արձանագրութիւնից արտագրուած է միայն հետևեալ տողերը²⁾.

. . . Ի թագաւորութեան. . . կանգնեցի զեկեղեցիս . . . հաստատ է ոս յանուն գլխաւոր առաքելոյն Պետրոսի. . . վասն յիշատակի ծնողաց իմոց. գնեցի զգիւղս:

Եկեղեցիս մէջը և շուրջը կան բաւական նոր գերեզմաններ:

Եկեղեցու արևմտեան կողմում կայ մի փոքրիկ մատուռ, որ ամենայն հաւանականութեամբ, լինելու է Մարիամ տիկնոջ դամբարանը: Սա շինուած է սև և կարմիր սրբատաշ քարերով, 8/1 մետր երկարութեան, 5 մետր լայնութեան և 4/1 մետր բարձրութեան: Արևելեան կողմում ունի մի կիսաբոլոր կողակ, սեղանով և առանց խորանների: Այժմ մնում են միայն հիւսիսային և արևմտեան պատերը, մասամբ էլ արևելեան պատի կողակը: Հիւսիսային պատի մէջ, ներքուստ, կան երեք որմնասիւն, որոնց վրայ բոլորում են երկու կիսաբոլոր, պատին կից կամարներ: Այս հիւսիսային պատի մէջ բացւում է մի դուռն, որի կամարակալ քարի վրայ եղել է արձանագրութիւն, սակայն ջնջուած է, այնպէս որ գրերի տեղը հինգ սանտիմետրաչափ փոս է ընկած, կողքերին նկատելի են տառերի հետքեր:

Այս մատրան մէջ, դռան մօտ, կայլմի խաչքար, հետևեալ տապանագրով.

Սբ. Պաշա բարեխաւս Տր Վրդանիսին. ԹՎ 22 (=1541),

Այս մատրան մէջ ևս այժմեան գիւղացիները թաղել են ի-

1) Ստ. Օրբելեան:

2) Ալիշան. Միսական. եր. 51:

րենց մեռելները, այնպէս որ հակառակ ցանկութեան հնարաւոր չեղաւ այստեղ պեղում կատարել:

Մատրան արևմտեան պատին կից, զրսից, կանգնած են երեք մեծ խաչքար, որոնցից մինի տապանագիրը բոլորովին եզծուած է, իսկ երկուսինը հետեւեալներն են.

Սբ. Սաշա բարեխաւս Փանոս աղին. թվ. ՌԻԷ (—1578),

Սբ. Սաշա բարեխաւս Բէրամին Գուշանին թվ. ՌՄԱ. (—1602),

Նաև նոյն մատրան հարաւ-արեւելեան պատին կից, զրսից, կանգնած են դարձեալ երկու խաչքար, որոնց վրայ կարդացուած է.

Սբ. Սաշա բարեխաւս է Հալսասուր աղին. թվ. ՋԿԵ (—1516),

Սբ. Սաշա բարեխաւս Աղաբին, Ջանհաին թվ. ՋԿԷ (—1518):

ՄԱՍՐՈՒՑ ԱՆԱՊԱՏ

Այս, ճարտարապետական տեսակէտից առանձին արժէք չը ներկայացնող, վանքը դռնուած է Վալի-Աղալու և Մակքար գիւղերի միջև, մի հարթութեան վրայ: Եկեղեցին շինուած է հասարակ քարով: Միանգամայն անյայտ է վանքի հիմնարկութեան թուականը և հիմնադրի անունը, միայն կաթողիկէի վրայ եղած արձանագրութիւնից երևում է, որ վերանորոգուել է 1611 թուին՝ նոյն վանքի առաջնորդ՝ Դաւիթ եպիսկոպոսի ձեռքով, որի գերեզմանը գտնուած է արևելեան պատի մօտ:

Վանքը շրջապատուած է պարսպով, որի թէ ներսը և թէ դուրսը նկատելի են շինութեան հետքեր, կան նաև խաչքարեր ԺԶ. դարից: Ըստ երևութին վանքը բաւական հին պիտի լինի, որովհետև սեղանի վրայ մնացել է մի արձանագրութեան մաս՝ 1219 թուից, որ հետեւեալն է.

Ի թագաւորութեան Աւշնի. . . ի խանութեան թաթարին. . . ի հայրապետութեան Աւանէսին. . . ի թվին ՌԿԸ. . . Եւ միաբան. . . Լուսաւորչի վանաց:

Եկեղեցու զմբէթի վրայ արձանագրուած է.

Կամաւն Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցին ի թվ ՌԿ (—1611). ի կաթողիկոսութեան Տէր Մէլքիսէթին, ի թագաւորութեան Շահապասին, ի զանութեան Ամիր Գիւնայ

խանին և մէլիքութեան Տէր Վարդանին եւ Դաւիթ առաջ-
նորդ վանիցս նորոգել ետու։

Մի խաչքարի վրայ.

Կենաց խաչս Ղուկաս եպիսկոպոսին է. թվ. ԶԾ
(=1501)։

Մի ուրիշ խաչքարի վրայ.

Սբ խաչս բարեխաւս Բարաթ աղին թվ. ԶԶԹ
(=1540)։

Վանքի արեւելեան պատի մօտ Կանգնած խաչքարի վրայ.

Աւծեալ արեամբ Յիսուսի սուրբ խաչս բարեխաւս
Դաւիթ եպիսկոպոսին հոգոյն. թվ. ՌԿ (=1611). յիշե-
ցէք ի Քրիստոս զԴաւիթ եպիսկոպոս, որ նորոգեաց զե-
կեղեցիս։

ԿՈՐԸՅ Ս. ԱՍՏՈՒՆԸՆԸՆԻՆ

Ստորին Ատիեաման գիւղում, որ հնումը եղել է Սիւնեաց
Հայկազուն իշխանների աթոռանիստը և կոչուել է Կոթ, մնում
են Ս. Աստուածածին եկեղեցու աւերակները։ Այս եկեղեցին,
Ստեփան Ծրբելեանի ասելով, շինել է Սիւնեաց Գրիգոր Սուփան
իշխանը Ժ դարի սկզբին։ Այստեղ պահուել է այն հռչակաւոր ս.
Նշանը, որ այժմ գտնուում է Սեանայ վանքում¹⁾։

Եկեղեցին գտնուում է այժմեան գիւղի արեւմտեան կողմում,
մի բարձր սարաւանդի վրայ, որտեղից մի հիւնալի տեսարան է
բացւում։ Շինուած է կարմրաւոյն, տաշած քարով. քառանկիւնի
է և ունի մի կողակ և չորս աւանդատուն։ Այժմ թէ ձեղունը և
թէ պատերի մեծագոյն մասը քանդուած՝ մի շեղջակոյտ են ներ-
կայացնում, և այս ու այն քարակոյտի մէջ ընկած են Գրիգոր
Սուփանի այս եկեղեցու հիմնարկութեան մասին գրած այն ըն-
դարձակ արձանագրութեան բեկորները, որ ընդօրինակել է Ստե-
փանոս Ծրբելեանը²⁾։

Եկեղեցու շուրջը կան բազմաթիւ խաչքարեր, և խցերի
հիմնապատեր³⁾։

ԳՆԵՆԸՎԱՆՔԻ ԿՆՄ ԱՆԳԻՐ ՎԱՆՔԻ

Օրգակուլի և Բէղլու Հոււէին Սարաչլու գիւղերի միջև, մի
բարձր քարափի վրայ աւեր դրութեամբ մնում է Գանձավանքը,

1) Տես Սեանայ վանքի նկարագրութեան մէջ։

2) Տես Ստ. Ծրբելեան։

3) Տես Ն. Ատիեաման գիւղի նկարագրութեանը։

որին այժմ Անգիր վանք են կոչում, որովհետև վերան ոչ մի գիր չկայ, և որի մասին պատմական տեղեկութիւններ էլ պակասում են:

ԹԱՅՉԱՐՈՒԽԻ ՎԱՆՔԸ

Դարաշիջակի Թայչարուխ գիւղից դէպի հարաւ, հազիւ 2 կիլոմետր հեռու, մի անտառապատ բլրի տափարակ զազաթին բարձրանում է մի հին, վրացական տաճար՝ սեւ, տաշած քարից շինուած: Տաճարը օրօրոցածէ է, անգամբէթ և ունի հարաւային և արեւմտեան կողմերում մի-մի գաւիթ, իսկ հիւսիսայինում մի մատուռ, որ բացւում է տաճարի մէջ:

Տաճարի երկարութիւնն է 13,60 մետր, լայնութիւնը 7,65 մետր, և բարձրութիւնը՝ 11 մետր: Արեւելեան ճակատին կայ մի երկար և նեղ պատուհան, որի վերեւ երկու բարձրաքանդակ աղաւնի, կողքերին մի մի ոտգաս: Փոքր ինչ ներքեւ վրաց խուցուրի տառերով մի եղծուած արձանագրութիւն:

Տաճարը ներքուստ անսիւն է, պատերին կից բարձրանում են չորսական, հասարակ, քառանկիւնի որմասիւններ, որոնց վրայ բոլորում են ումանական կամարներ: Ձեղունը ներքուստ բոլորակած է, արտաքուստ եռանկիւնի: Սեղանը բոլորակած է, շատ ցածր, առանց խորանների: Երկու կողքերին ունի քառանկիւնի փոքրիկ բացուածքներ, որոնք բացւում են զաղտնի պահարանների մէջ:

Տաճարի հիւսիսային պատին կից, կարծես յետոյ, շինուած է մի մատուռ, որ թերեւ իբր խորան է ծառայել: Սա մի փոքրիկ, կամարակալ շէնք է, երկու նեղ պատուհաններով արեւելեան և արեւմտեան պատերին և մի ղղնով, որ բացւում է տաճարի մէջ: Արեւելեան կողմում կայ մի ցածրադիր սեղան:

Հարաւային կողմի գաւիթը մի հասարակ շէնք է, միայն միակ դռան վերեւ կայ մի բարձրաքանդակ աղաւնի, աջ կողքին արեւի մի ժամացոյց:

Տաճարի մէջ կան մի քանի գերեզմանաքարեր, որոնցից երկուսի վրայ կան վրաց խուցուրի տառերով տապանագիրներ:

Տաճարի հանդէպ կայ մի մացառուտ, որի ծառերն այնպէս կարգին դասաւորուած են, որ իսկոյն նկատւում է երբեմն ծառուղի կազմելը*):

*) Ի՞նչ այս վանքը այցելած միջոցին սաստիկ մուշը թոյլ չը տուեց լուսանկարելու: